




Ամենի նորակառույց Ս. Թադևոս եկեղեցին, օծումը շարք սը առաջ :

ՓԱՌԱՀԵՂ ՕԾՈՒՄ

ԱՄՄԱՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ Ս. ԹԱԴԵՈՍ ԵԿԵՂԵՅԻՆ

Մօտ երեք տարիներ առաջ, 1965-ի Հոկտեմբերի 10-ին, Ամենապատիւ Պատրիարք Ս. Հօր, Բարերար Տիար Յարութիւն Թադոսեանի եւ Միաբանութեան անդամներու և հաւատացեալ ժողովուրդի խումբ բազմութեան մը ներկայութեան՝ կատարուած էր հիմնարկէի հանդիսաւոր արարողութիւնը Ամմանի Ս. Թադէոս եկեղեցիին: Նիւորքաքանկ Բարերարը յատկապէս ժամանած էր նրուապէմ, ներկայ ըլլալու համար իր նուիրատուութեամբ կառուցուելիք Ամմանի տաճարին հիմնարկէին:



Անդրանիկ Ս. Պատարագը կը բարձրէ Ն. Ամեն. Տ. Եղիշէ Ս. Արքեպ. Տէրութեան: Պատարագիչ՝ Գերշ. Տ. Շահէ Եպս. Անէմեան:

Հակառակ քաղաքական շփոթ կացութեան և տաղմայմերուն, եկեղեցիի շինութիւնը անխափան շարունակուեցաւ եւ ներկայ տարւոյ Հոկտեմբերին արդէն իր աւարտին հասած էր: Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հօր երաւերին ընդառաջելով, Բարերար Տիար Յարութիւն Թադոսեան եւ իր Ազնուափայլ Տի-

կինը ընդունեցին մերկայ գտնուիլ Ս. Թադևոս եկեղեցիի օծման արարողութեան, որ տեղի ունեցաւ կիրակի, 27 Հոկտեմբեր 1968-ին:

Մասնաւոր կարգադրութեամբ մը, Երուսաղէմի Պատրիարք Ս. Հօր եւ Բարեբար ամուլին կ'ընկերանային Լուսարարայեւո Գերշ. Տ. Հայրիկ Արք. Առլանեան, Դիւանայեւո Գերշ. Տ. Շահէ Եպս. Անէմեան, Միտրան Հայրեր, սարկաւազներ եւ ժառանգաւորներ՝ կարելի հանդիսաւորութեամբ կատարելու համար օծման փառահեղ խորհուրդը:

Անդրանիկ Ս. Պատարագը մատոյց Գերշ. Տ. Շահէ Եպս. Անէմեան եւ ներշնչուած ու գեղեցիկ քարոզ մը խօսեցաւ Ն. Ամենապատուութիւն Պատրիարք Ս. Հայրը: Պատարագին եւ օծման արարողութեան մերկայ գտնուեցան Ամմանի քրիստոնեայ յարանաւանդութիւններու պետերը եւ հերկայացուցիչները:



Յորդանանի վարչապետ Ն. Վան. Պահմաք էլ-Թալիունի «Քաուֆապ»ի Առաջին կարգի շէնքումով կը գարդարէ Բարեբար Տիար Յ. Թադևոսանի կուրծքը, մինչ Տկն. Թադևոսան գոհունակութեամբ կը դիտէ:

Նոյն օրը երեկոյեան, Պատրիարք Ս. Հայրը Ամմանի «էլ Օրտուն» պանդոկին մէջ տրուած շքեղ ճաշկերոյքով մը պատուեց Բարեբար ամուլը, իսկ Յորդանանի վարչապետ Ն. Վ. Պահմաք էլ-Թալիունի Տիար Թադևոսանի կուրծքը գարդարեց «Քաուֆապ»ի Առաջին կարգի շէնքումով:

Ամմանի Հայ գաղութին կողմէ իրեն յարգանքի արտայայտութիւն՝ Շաբաք, 26 Հոկտեմբերի երեկոյեան Ամմանի Մարգալեան Միութիւնը ճոխ ընթրիք մը սարքեց «Յիլատիլիթա» պանդոկին մէջ, իսկ կիրակի երեկոյեան՝ Հ. Մ. Ը. Միութիւնը թէյստեղան մը տուաւ իր Ակուսքին մէջ:

Տաղանդաւոր և հաւատացեալ հայ, Տիար Յարութիւն Թադոսեան ծնած է 1892-ին Խարբերդի Բշաղափ գիւղը: Երեք տարի տեղւոյն ճախարհաբար յաճախել է իւր 1909-ին գաղթած է Ամերիկա եւ տարի մը վերջ սկսած է իր անձնական գործին: Մեծ նշանակիւն գտի տուած է իր ընտանիքի անդամներուն մեծ մասը: Ամուսնացած է Օրդ.-Ազաւնի Կօշկարեանի հետ և ունեցած են երկու դուստրեր՝ Նոյսաբէք եւ Ալիս-Արփինէ. այս վերջինը կորսնցուցած են շատ կամուխ:

Տիար Յ. Թադոսեան, որ բազմազրազ անձնաւորութիւն մըն է եւ հնարիչը գանազան մեքենաներու, 1925-ական թուականներէն սկսեալ ծառայած է Ամերիկեայ համայնքին եւ եկեղեցիին: Իբրեւ վարձատրութիւն իր բազմամեայ գործունէութեան, որուն ընթացքին միշտ ալ իրեն օժանդակ եղած



Ն. Աննա. Պատրիարք Ս. Հօր կողմէ շէլ Օրտոն» պանդոկին մէջ տրուած ճաշկերոյթէն ետք, Բարեբաբ ամուլը Յարդանանի վարչապետ Ն. Վ. Պահնաթ էլ-Թալիսուրի (կեդրոնը), Մերակայտի Նախագահ Ն. Վ. Սաիտ Մալքթի Փաշայի (աջէն երրորդը), Ն. Աննա. Պատրիարք Ս. Հօր (աջէն չորրորդը), Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ապամեանի (ձախէն չորրորդը), Դիւանապետ Գերշ. Տ. Շահէ Նպս. Անէմեանի (կեդրոնը), եւ Ամմանի կրօնական ներկայացուցիչներու հետ:

է Ազն. Տիկ. Թադոսեան, 1956-ին Ամմանյն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Վեհափա Հայրապետին կողմէ պարգևատրուած է Ս. Գրիգոր Լուսաւորիչի Ա. Կարգի ակամակու շքանշանով: Իսկ 1964-ին ստացած է Ն. Ամմանպատուութիւն Պատրիարք Ս. Հօր կողմէ նուիրուած Ս. Յարութեան Տաճարի ադամանդակու շքանշանը: